# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 732-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Անտառամեջ բնակավայրում գտնվող, Մաքսիմ Ավագյանին պատկանող 05-012-0016-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Անտառամեջ բնակավայր, 5-րդ փողոց, 5 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հունիսի 29
ք. Ճամբարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 733-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դպրաբակ բնակավայրում գտնվող, Վարսենիկ Նազլուխանյանին պատկանող 05-031-0004-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Դպրաբակ բնակավայր, 2-րդ փողոց, 1/2 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. հունիսի 29
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 734-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, ՀՀ Ճամբարակ համայնքի ավագանու 22.04.2026 թվականի N 29-Ա որոշմամբ և ՀՀ կառավարության 09.06.2022թ. N 842-Լ և 19.03.2026թ. N 307-Լ որոշումներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Վահան բնակավայրում ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված պայմաններով բնակարաններ կառուցելու նպատակով Վահան բնակավայրի 5-րդ փողոց 13 հողամաս հասցեում գտնվող 05-081-0143-0498 կադաստրային ծածկագրով համայնքի սեփականություն /վկայական 09062026-05-0072/ համարվող բնակավայրի բնակելի կառուցապատման 0.10124 հա հողամասը ուղղակի վաճառքով տրամադրել քաղաքացիներ Սերոբ Դանիելյանին և Սիրարփի Ապրեսյանին:
2. Վաճառքի գին սահմանել 1 քառակուսի մետրի արժեքը հինգ հարյուր /500/ ՀՀ դրամ:
3. Քաղաքացիներ Սերոբ Դանիելյանը և Սիրարփի Ապրեսյանը պարտավոր են Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե՝ 900185067148 հաշվեհամարին որպես հողի արժեք վճարել 506.200 (հինգ հարյուր վեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. հունիսի 29
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 735-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, ՀՀ Ճամբարակ համայնքի ավագանու 22.04.2026 թվականի N 29-Ա որոշմամբ և ՀՀ կառավարության 09.06.2022թ. N 842-Լ և 19.03.2026թ. N 307-Լ որոշումներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Վահան բնակավայրում ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված պայմաններով բնակարաններ կառուցելու նպատակով Վահան բնակավայրի 5-րդ փողոց 31 հողամաս հասցեում գտնվող 05-081-0143-0501 կադաստրային ծածկագրով համայնքի սեփականություն /վկայական 15062026-05-0048/ համարվող բնակավայրի բնակելի կառուցապատման 0.09855 հա հողամասը ուղղակի վաճառքով տրամադրել քաղաքացիներ Արա Զարգարյանին և Զառա Կիրակոսյանին:
2. Վաճառքի գին սահմանել 1 քառակուսի մետրի արժեքը հինգ հարյուր /500/ ՀՀ դրամ:
3. Քաղաքացիներ Արա Զարգարյանը և Զառա Կիրակոսյանը պարտավոր են Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե՝ 900185067148 հաշվեհամարին որպես հողի արժեք վճարել 492.750 (չորս հարյուր ինսուներկու հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. հունիսի 26
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 736-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, ՀՀ Ճամբարակ համայնքի ավագանու 22.04.2026 թվականի N 29-Ա որոշմամբ և ՀՀ կառավարության 09.06.2022թ. N 842-Լ և 19.03.2026թ. N 307-Լ որոշումներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Վահան բնակավայրում ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված պայմաններով բնակարաններ կառուցելու նպատակով Վահան բնակավայրի 5-րդ փողոց 27 հողամաս հասցեում գտնվող 05-081-0143-0503 կադաստրային ծածկագրով համայնքի սեփականություն /վկայական 09062026-05-0074/ համարվող բնակավայրի բնակելի կառուցապատման 0.09876հա հողամասը ուղղակի վաճառքով տրամադրել քաղաքացի Էդիկ Բալյանին:
2. Վաճառքի գին սահմանել 1 քառակուսի մետրի արժեքը հինգ հարյուր /500/ ՀՀ դրամ:
3. Քաղաքացիներ Էդիկ Բալյանը պարտավոր է Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե՝ 900185067148 հաշվեհամարին որպես հողի արժեք վճարել 493.800 (չորս հարյուր իննսուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. հունիսի 29
ք. Ճամբարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 737-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Վահան բնակավայրում գտնվող, Ավետիք Շուշանյանին պատկանող 05-081-0020-0015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Վահան բնակավայր, 3-րդ փողոց, 41 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հունիսի 29
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 738-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005 թվականի թիվ 2408-Ն որոշման հավելված 1-ի սահմանված կարգի 19-ից 22 կետերով և հիմք ընդունելով կառուցապատողի կողմից 26.06.2026թ. տրված ՇԹԴ/102/15824-26 դիմում-հայտը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Բավարարել Արգիշտ Կիրակոսյանի կողմից տրված դիմում-հայտը և երկարաձգել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Գարդմանի փողոց 5/1 հողամաս հասցեում մեկ հարկանի տնակի և օժանդակ շինության կառուցման աշխատանքների կատարման նպատակով Ճամբարակ համայնքի կողմից 18.06.2024 թվականին տրված 20-Շ շինարարության թույլտվության ժամկետը:
2. Շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ կառուցապատողը պարտավոր է դիմել Ճամբարակ համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. հունիսի 30
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 739-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքում գտնվող, համայնքին սեփականության իրավունքով պատկանող 05-002-0102-0048 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Ճամբարակ քաղաք, Լեռնյի փողոց, 3/1 շինություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 740-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքում գտնվող, համայնքին սեփականության իրավունքով պատկանող 05-002-0101-0094 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Ճամբարակ քաղաք, Տ. Մեծի փողոց, 15/25 ավտոտնակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 741-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքում գտնվող, համայնքին սեփականության իրավունքով պատկանող 05-002-0079-0066 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Ճամբարակ քաղաք, Պ. Սևակի փողոց, 8/8 ավտոտնակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. հունիսի 30
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 742-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքում գտնվող, համայնքին սեփականության իրավունքով պատկանող 05-074-0019-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Շողակաթ բնակավայր, 3-րդ փողոց, 6/1 ավտոտնակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 743-Ա

## ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐԱԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂ. 1/2 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱԼԵՐ ՄԻՔԱԵԼԻ ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 10.06.2008թ. 27.04.2010թ. N 50-Ն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 117-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի Դպրաբակ գյուղի 2-րդ փողոց, տուն 1/2 հասցեում 05-031-0004-0001 կադաստրային ծածկագրով գտնվող շենք-շինության կառուցման և սպասարկման համար փաստացի սահմանազատված և օգտագործվող 0.16 հա հողամասին կից 0.1հա հողամասը իրեն տրամադրելու և մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինական ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. 05-031-0004-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը բավարարում է ՀՀ «Հողային օրենսգրքի» 117-րդ հոդվածի և «Իրավունք հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջներին:
2. Վերականգնել Վալեր Միքաելի Շախնազարյանի՝ ծնված 19.05.1955թ. սեփականության իրավունքը 0.16հա տնամերձ հողամասին կից 0.1հա հողամասի, ինչպես նաև հողամասի վրա 1985 թվականին կառուցված մեկ հարկանի 77.8քմ ներքին մակերեսով բնակելի տան.,34.2քմ մակերեսով բաց

պատշգամբի.,7.4քմ ներքին մակերեսով մառանի և 1998թվականին կառուցված ծածկի նկատմամբ, որոնք կառուցված չէ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ ճանաչել Վալեր Շախնազարյանի սեփական գույք:

3. Համայնքի կողմից Վալեր Միքաելի Շախնազարյանին սեփականության իրավունքով ճանաչված 0.26 հա հողամասը չի գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածի ցանկում, իսկ մնացորդ 0,093հա հողամասը թողնել որպես համայնքային սեփականություն:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. հունիսի 30
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 744-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005 թվականի թիվ 2408-Ն որոշման հավելված 1-ի սահմանված կարգի 19-ից 22 կետերով և հիմք ընդունելով կառուցապատողի կողմից 18.05.2026թ. տրված ՇԹԴ/90/11583-26 դիմում-հայտը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1. Բավարարել Վարդան Լազարյանի կողմից տրված դիմում-հայտը և երկարաձգել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոց 21/3 բնակելի հասցեում առկա տնտեսական շինության վերակառուցման որպես քոթեջային տնակների՝ 4 հատ, և օժանդակ շինության կառուցման աշխատանքների կատարման նպատակով Ճամբարակ համայնքի կողմից 08.07.2024 թվականին տրված 26-Շ շինարարության թույլտվության ժամկետը:
2. Շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ կառուցապատողը պարտավոր է դիմել Ճամբարակ համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակման հաջորդ օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 745-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Գետիկ բնակավայրի 2-րդ փողոց, 18 հասցեում գտնվող, Հակոբ Ծատուրյանին պատկանող 05-028-0011-0008 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը վերահասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Գետիկ բնակավայր, 2-րդ փողոց, 27 բնակելի տուն:
2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Գետիկ բնակավայրում գտնվող, Սուրեն Դալլաքյանին պատկանող 05-028-0034-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Գետիկ բնակավայր, 2-րդ փողոց, 18 բնակելի տուն:
3. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ղեկավարի 10.03.2026 թվականի N 131-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. հուլիսի 01
ք. Ճամբարակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 746-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Արտանիշ բնակավայրում գտնվող, Վարդանուշ Սարգսյանին պատկանող 05-018-0016-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Արտանիշ բնակավայր, 1-ին փողոց, 50 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 747-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրում գտնվող 05-074-0122-0002 կադաստրային ծածկագրով 8,5 հա հատուկ պահպանվող տարածքների հանգստի համար նախատեսված հողը ՀՀ Հարկային օրենսգրքի համաձայն՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է:
Նշված անշարժ գույքը գրանցված է ԱԲԳԱՐ ՍՊԸ-ի անվամբ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 14.12.2007թ. տրված թիվ 2132188 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի:
ԱԲԳԱՐ ՍՊԸ-ն ԵԿԴ/0224/04/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 13.10.2016թ. վճռով ճանաչվել է սնանկ:
Նույն դատարանի 03.05.2017թ. թիվ ԵԿԴ/0224/04/16 որոշման համաձայն 12.06.2020թ. կայացված 05-074-0122-0002 կադաստրային ծածկագրով 8,5 հա հողամասի /գույքի/ աճուրդով 8.000.574 ՀՀ դրամով վաճառվել է ֆիզիկական անձ հանդիսացող՝ Մանուշակ Արմենակի Մելիքյանին /հաշվառված՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Օգանովի փողոց, 17-րդ շենք, բն.14 հասցեում/:
Առուվաճառքի վերաբերյալ կազմվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որը 06.07.2020թ. վավերացվել է նոտարական կարգով (նոտարական ակտի կոդը՝ 779-20200706-125-4609197, գաղտնագիրը՝ WWS3HW):
Պայմանագրի կողմեր են հանդիսացել մի կողմից ԱԲԳԱՐ ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հարութ Էդիկի Ղարիբյանը, որպես վաճառող և մյուս կողմից Մանուշակ Արմենակի Մելիքյանի ներկայացուցիչ՝ Վահե Վաղարշակի Սաղաթելյանը, որպես գնորդ:
Մանուշակ Մելիքյանի ներկայացուցիչ՝ Վահե Սաղաթելյանի կողմից առուվաճառքի վերաբերյալ պայմանագիրը սահմանված ժամկետում՝ 24.07.2020թ. ներկայացվել է ՀՀ կադաստրի կոմիտե անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով, սակայն «Գույքի նկամամբ իրավունքների պետական գրանցման

մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքերով հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվել է, քանի որ չի ներկայացվել համապատասխան հասցեի որոշում, ինչպես նաև հողամասի մի մասը Սևան ազգային պարկի տարածքում ընդգրկված չլինելու մասին համապատասխան համաձայնություն:

Մանուշակ Մելիքյանի կողմից մինչև օրս միջոցներ չեն ձեռնարկվել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով նշված թերությունները վերացնելու համար:

Մանուշակ Մելիքյանը, փաստացի հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2026 թվականի հունիսի 2-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարների գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

## 2.ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈւ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն գույքային հարկերի հաշվառման համակարգից ձեռք բերված տվյալների՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրում գտնվող 05-074-0122-0002 կադաստրային ծածկագրով 8,5 հա հատուկ պահպանվող տարածքների հանգստի համար նախատեսված հողը նոտարական կարգով վավերացված իրավական ակտի (պայմանագրի) համաձայն փաստացի հանդիսանում է Մանուշակ Արմենակի Մելիքյանին սեփականությունը:

Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի տեղեկանքի համաձայն՝ անշարժ գույքի համար վճարման ենթակա ժամկետանց ընդհանուր գումարը 2021-2025թ. ներառյալ կազմում է 1891383 ՀՀ դրամ, այդ թվում ապառք՝ 1447380 ՀՀ դրամ, տույժ՝ 444003 ՀՀ դրամ: Մասնավորապես՝

2021թ. ապառք՝ 168300ՀՀ դրամ, տույժ՝ 49144 ՀՀ դրամ,
2022թ. ապառք՝ 201960ՀՀ դրամ, տույժ՝ 58972 ՀՀ դրամ,
2023թ. ապառք՝ 235620ՀՀ դրամ, տույժ՝ 88717 ՀՀ դրամ,
2024թ. ապառք՝ 336600ՀՀ դրամ, տույժ՝ 145495 ՀՀ դրամ,
2025թ. ապառք՝ 504900ՀՀ դրամ, տույժ՝ 101675 ՀՀ դրամ,
(Ըստ տարիների պարտքերի վերաբերյալ տեղեկանքը կցվում է):

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հունիսի 12-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Մանուշակ Մելիքյանին /հիմք՝ ծանուցագիրը/:

Վարչականվարույթի լսումներին ներկայացել է Մանուշակ Մելիքյանի լիազոր ներկայացուցիչ՝ Սպարտակ Առաքելյանը և ներկայացրել Մանուշակ Մելիքյանի ստորագրությամբ գրավոր առարկություն այն մասին, որ 05-074-0122-0002 կադաստրային ծածկագրով հողամասի նկամամբ սեփականության իրավունքն իր անվամբ գրանցում չի

ստացել: Նշել է, որ ՀՀ կադաստրի կոմիտեի 29.07.2020թ. «Գույքի նկամամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» որոշման համաձայն 05-074-0122-0002 կադաստրային ծածկագրով հողամասի նկամամբ սեփականության իրավունքի մերժվել է, համապատասխան որոշում ներկայացնելու և Սևան ազգային պարկ ՊՈԱԿ-ի կողմից համաձայնություն ներկայացնելու հիմքով: Նշված որոշմամբ հաստատված է, որ 5,141 հա հողամասը ընդգրկված է Սևան ազգային պարկի տարածքում:

Բացի այդ նշել է, որ նշված անշարժ գույքը սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ դեռևս պատկանում է ԱԲԳԱՐ ՍՊԸ-ին: ԱԲԳԱՐ ՍՊԸ-ն ԵԿԴ/0224/04/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճռով ճանաչվել է սնանկ, սակայն սնանկության վարույթը դեռևս չի ավարտվել:

Այնուհետև հղում է կատարվել ՀՀ հողային օրենսգրքի 19-րդ հոդվածի, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի, ՀՀ հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի և 231-րդ հոդվածի դրույթներին:

Նշել է նաև, որ 05-074-0122-0002 կադաստրային ծածկագրով հողամասի նկամամբ Մանուշակ Մելիքյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին որևէ վճիռ, դատավճիռ կամ այլ իրավական ակտ առկա չէ: Խնդրել է չեղարկել իր նկատմամբ հարկային պարտավորությունը և կարճել 02.06.2026թ. թիվ 598-Ա որոշման հիման վրա հարուցված վարչական վարույթը:

Ներկայացուցիչ Սպարտակ Առաքելյանը պնդեց նշված առարկությունը, խնդրեց վարույթը կարճել և հարկային պարտավորությունը Մանուշակ Մելիքյանի վերաբերյալ չկիրառել, հաշվի առնելով, որ նշված հողամասը դեռևս ՀՀ կադաստրի կոմիտեում չի գրանցվել Մանուշակ Մելիքյանի անվամբ: Միաժամանակ ներկայացրեց ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված գրությունը գրանցումը կասեցնելու մասին:

## 3. ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է գույքը հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ նոտարական վավերացմամբ առուվաճառքի պայմանագրի առկայության դեպքում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցման ներկայացնելու պարտականությունը կրում է ձեռք բերողը:

Իսկ դրանց վերաբերյալ հաշվառման տվյալները ՀՀ կադաստրի կոմիտեն փոխանցում է տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններին:

ՀՀ հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ

համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:
ՀՀ հարկային օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ֆիզիկական անձանց համար անշարժ գույքի հարկի հաշվարկման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:
Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:
ՀՀ հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ու կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները) անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:
ՀՀ հարկային օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Անշարժ գույքի հարկի պարտավորությունն առաջանում է անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության կամ անհատույց (մշտական) օգտագործման կամ կառուցապատման իրավունքի պետական գրանցման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Անշարժ գույքի հարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության կամ անհատույց (մշտական) օգտագործման կամ կառուցապատման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:
Նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Անկախ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներից՝ եթե հարկման օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը պետական գրանցում է ստանում դատավճռի, վճռի կամ իրավական ակտի հիման վրա, ապա նոր սեփականատիրոջն են անցնում դատավճռի, վճռի կամ իրավական ակտի ընդունման ամսվան հաջորդող ամսվա 1-ից մինչև սեփականության իրավունքի պետական գրանցման ամիսը ներառյալ տվյալ հարկման օբյեկտի համար անշարժ գույքի հարկի գծով հաշվարկված պարտավորությունները: Սույն կետով սահմանված դեպքերում անշարժ գույքի հարկի պարտավորությունն առաջանում է դատավճռի, վճռի կամ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:
Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝ անհատական իրավական ակտ՝ նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց. Երևան քաղաքի Կենտրոն և նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.05.2017թ. թիվ ԵԿԴ/0224/04/16 որոշման համաձայն 12.06.2020թ. աճուրդային կարգով վաճառվել է 05-074-0122-0002 կադաստրային ծածկագրով 8,5 հա հողամասը, որը 8.000.574 ՀՀ դրամով գնել է ֆիզիկական անձ հանդիսացող՝ Մանուշակ Արմենակի Մելիքյանը:
Աճուրդի հիման վրա կազմվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որը 06.07.2020թ.վավերացվել է նոտարական կարգով (նոտարական ակտի կոդը՝ 779-20200706-125-4609197, գաղտնագիրը՝ WWS3HW):

Պայմանագրի կողմեր են հանդիսացել մի կողմից ԱԲԳԱՐ ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հարութ Էդիկի Ղարիբյանը, որպես վաճառող և մյուս կողմից Մանուշակ Արմենակի Մելիքյանը, որպես գնորդ:
Նոտարիատի մասին ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի համաձայն՝
1. Նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողությունների արդյունքով կայացվող որոշումը, գործարքը, գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը կամ այլ փաստաթղթի հաստատումը կամ վավերացումը, կատարողական մակագրության թերթը նոտարական ակտեր են:
2. Նոտարական ակտը պետք է բովանդակի՝
1) նոտարական ակտի համարը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը.
2) նոտարական տարածքը, նոտարի անունը, ազգանունը.
3) փաստաթղթի նույնականացումը հաստատող անհատական գաղտնագիրը, որի միջոցով հնարավոր է ստուգել փաստաթղթի իսկությունը Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի պաշտոնական կայքում (www.e-notary.am).
4) նոտարի ստորագրությունը և կնիքը, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի վավերացման դեպքում՝ էլեկտրոնային թվային ստորագրությունը և էլեկտրոնային կնիքը.
5) առկայության դեպքում՝ պետական տուրքի և նոտարի մատուցած ծառայությունների վճարի չափը.
6) օրենքով սահմանված այլ պարտադիր պայմաններ:
Այսինքն, անշարժ գույքի առուվաճառքի վերաբերյալ 06.07.2020թ. նոտարական կարգով վավերացված պայմանագիրը (նոտարական ակտի կոդը՝ 779-20200706-125-4609197, գաղտնագիրը՝ WWS3HW) նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն հանդիսանում է անհատական իրավական ակտ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձանց՝ վաճառողին և գնորդին:
Տվյալ դեպքում Մանուշակ Մելիքյանը օրենքի ուժով փաստացի հանդիսանում է 05-074-0122-0002 կադաստրային ծածկագրով 8,5 հա հողամասի սեփականատեր և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ:
Հաշվի առնելով, որ Մանուշակ Մելիքյանը անշարժ գույքը ձեռք է բերել իրավական ակտի (նոտարական ակտի) հիման վրա, ուստի անկախ ՀՀ հարկային օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներից նրան են անցնում նշված իրավական ակտի ընդունման ամսվան հաջորդող ամսվա 1-ից մինչև սեփականության իրավունքի պետական գրանցման ամիսը ներառյալ տվյալ հարկման օբյեկտի համար անշարժ գույքի հարկի գծով հաշվարկված պարտավորությունները:
ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:
Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.
3) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.
4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 2-րդ մասով, 176-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, 224-րդ, 225-րդ, 231-րդ, 232-րդ, 236-րդ, 401-րդ հոդվածներով, Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով, Նոտարիատի մասին ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով.

## Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ՝

1. Մանուշակ Արմենակի Մելիքյանից հօգուտ Ճամբարակ համայնքի բյուջե գանձել ընդամենը 1891383 ՀՀ դրամ /մեկ միլիոն ութ հարյուր իննսունմեկ հազար երեք հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամ անշարժ գույքի հարկի գումար, ներառյալ տույժերը:
2. Գումարը վճարել Ճամբարակ համայնքի թիվ 1 ՏԳԲ 900185001576 հաշվեհամարին:
3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ճամբարակ համայնքի ղեկավարին կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 748-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դպրաբակ բնակավայրում գտնվող, Մակիչ Նազլուխանյանին պատկանող 05-031-0011-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Դպրաբակ բնակավայր, 3-րդ փողոց, 1 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հուլիսի 02
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 749-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դպրաբակ բնակավայրում գտնվող, Արմենակ Լազյանին պատկանող 05-031-0012-0015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Դպրաբակ բնակավայր, 3-րդ փողոց, 2 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հուլիսի 02
ք. Ճամբարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 750-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքում գտնվող, Համբարձում Հարությունյանին պատկանող 05-002-0113-0008 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, Ճամբարակ քաղաք, Զորավար Անդրանիկի փողոց, 28/1 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հուլիսի 03
ք. Ճամբարակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 751-Ա

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 որոշման «7-րդ գլուխ շահագործման թույլտվություն (ավարտված շինարարության փաստագրում)», հիմք ընդունելով կառուցապատողի կողմից 01.07.2026թ. տրված ԱՇԹԴ//7616-26 դիմում-հայտը, ՇՏՏ//44937-26 30.04.2026 թվականի ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը և կատարողական փաստաթղթերը.

**Ո Ր Ո Շ Ու Մ   Ե Մ՝**

1. Ճամբարակ համայնքի Մարտունի բնակավայրի փողոցի մասնակի սալարկման աշխատանքները ընդունել շահագործման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ որոշման ընդունման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հուլիսի 03
ք. Ճամբարակ